ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.4/19206-2021

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավետիսյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (Պ-937-16.04.2021-ԱՍ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի մայիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 504 - Ա որոշումը:

/ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Կատարող՝ Զ. Դավեյան
Հեռ. 515685

«ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-937-16.04.2021-ԱՍ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծով առաջարկվում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 16-րդ հոդվածը լրացնել նոր 3.1-ին մասով, համաձայն որի՝ օրենքով կարող են սահմանվել իրավասու մարմնի որոշմամբ գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունների դադարեցման այլ հիմքեր:

Որպես նախագծի հիմնավորում նշվել է, որ Հայաստանի Հանրապետությունում գործում են տարբեր ոլորտներ և տարբեր գործառույթներ իրականացնող ՊՈԱԿ-ներ, որոնք իրենց ոլորտային առանձնահատկություններից ելնելով կարիք ունեն ավելի մասնագիտական և տվյալ ոլորտի համար առանցքային նշանակություն և կարևորություն ունեցող կարգավորումների, քան նախատեսված է օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչը հնարավորություն չի տալիս լիազոր մարմիններին՝ կախված ոլորտի առանձնահատկություններից, սահմանել տնօրենի լիազորությունների դադարեցման այլ հիմքեր:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ գործադիր մարմնի լիազորությունների դադարեցման հիմքերը կարող են սահմանվել միայն օրենքով:

Բացի դրանից, հարկ է նշել, որ ներկայացված նախագծի ընդունման նպատակահարմարության հարցին հնարավոր է անդրադառնալ միայն գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունների դադարեցման այն հստակ հիմքի առկայության դեպքում, որը նախատեսված չէ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասում և որի առկայության անհրաժեշտությունն առաջացել է գործնականում: Ուստի գտնում ենք, որ նախագծով առաջարկվող կարգավորումը կարող է կարգավորիչ նշանակություն ունենալ միայն համապատասխան ոլորտային օրենքում պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմնի լիազորությունների դադարեցման կոնկրետ հիմք նախատեսելու պարագայում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ օրենքի նախագիծն այս տեսքով ընդունելի չէ և ունի լրամշակման կարիք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՔԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Գրիգորյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը (Պ-937-16.04.2021-ԱՍ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

Լրամշակված տարբերակ

Պ-937-16.04.2021,09.06.2021-ԱՍ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» 2001 թվականի հոկտեմբերի 23-ի ՀՕ-248 օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ «ժդ» կետով.

«ժդ) առկա են օրենքով սահմանված այլ հիմքեր:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով սպառիչ թվարկված են տնօրենների լիազորությունների դադարման հիմքերը, որը հնարավորություն չի տալիս լիազոր մարմիններին՝ կախված ոլորտի առանձնահատկություններից, ոլորտը կարգավորող օրենքներով սահմանել տնօրենի լիազորությունների դադարման այլ ահնրաժեշտ հիմքեր:

Նույն հոդվածի 1.3-րդ մասի համաձայն՝ պետական կազմակերպության գործադիր մարմնի թափուր պաշտոնը համալրելու համար անցկացվող մրցույթի թեստավորման փուլը հաղթահարած մասնակիցները հարցազրույցի ժամանակ մրցութային հանձնաժողով են ներկայացնում համապատասխան պետական կազմակերպության զարգացման եւ բարեփոխման իրենց մշակած ծրագիրը?

Փաստացի ստացվում է, որ մրցութային հանձնաժողովը պետական կազմակերպության գործադիր մարմին է ընտրում այն հավակնորդին, ում կողմից ներկայացված համապատասխան պետական կազմակերպության զարգացման եւ բարեփոխման հայեցակարգը համարում է առավել ընդունելի եւ իրատեսական կատարման եւ կազմակերպության զարգացման համար:

Ըստ էության՝ լիազորված պետական մարմինը պետական կազմակերպության գործադիր մարմին է նշանակում մի անձի, ում հնարավորություն է տալիս, որպես կանոն 5 տարի ժամանակահատվածում իրագործելու իր կողմից ներկայացված պետական կազմակերպության զարգացման եւ բարեփոխման հայեցակարգը: Սակայն այն չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար օրենքով սահմանված չեն վերահսկման, հաշվետվողականության եւ վերջնական արդյունքում լիազորությունների դադարեցման հիմքեր:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Նախագծով առաջարկվող «Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի փոփոխությամբ հնարավորություն կտրվի համապատասխան ոլորտների լիազոր մարմիններին՝ ոլորտը կարգավորող համապատասխան օրենքներում սահմանել կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցնելու այլ հիմքեր՝ կախված տվյալ ոլորտի առանձնահատկություններից, մասնագիտական եւ պրոֆեսիոնալ կարողություններից:

Հայաստանի Հանրապետությունում գործում են տարբեր ոլորտների եւ տարբեր գործառույթներ իրականացնող ՊՈԱԿ-ներ, որոնք իրենց ոլորտային առանձնահատկություններից ելնելով կարիք ունեն ավելի մասնագիտական եւ տվյալ ոլորտի համար առանցքային նշանակություն եւ կարեւորություն ունեցող

կարգավորումների՝ քան նախատեսված է «Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, ինչը հնարավորություն չի տալիս լիազոր մարմիններին՝ կախված ոլորտի առանձնահատկություններից, սահմանել տնօրենի լիազորությունների դադարման այլ հիմքեր: Նշված հանգամանքը նվազեցնում է լիազոր մարմիների դերակատարումը տնօրենների աշխատանքի արդյունավետությունը չափելու եւ այն բարձրացնելու տեսանկյունից: Փաստացի լիազոր մարմինը հնարավորություն չի ունենում ոլորտը կարգավորող օրենքներով սահմանել լիազորությունների դադարման այլ հիմքեր, որի պատճառով հաճախ տնօրենների կողմից չի կատարվում այն աշխատանքը, կամ ոչ այն որակով, որի համար նա նշանակվել կամ ընտրվել է տնօրենի պաշտոնում:

3. Ակնկալվող արդյունքը

«Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի փոփոխությամբ հնարավորություն կստեղծվի համապատասխան ոլորտները կարգավորող օրենքներով ՊՈԱԿ-ի տնօրենների գործունեության արդյունավետության եւ հաշվետվողականության բարձրացման չափելի եւ տեսանելի չափանիշներ սահմանել՝ կախված ոլորտային առանձնահատկություններից: Նշված փոփոխությունների արդյունքում տնօրենի լիազորությունները դադարեցնելու հիմքերը կդառնան ավելի նպատակային եւ ուղղակի կապ կստեղծվի ակընկալվող կատարված աշխատանքի եւ դրա չկատարման պատճառով լիազորությունների դադարման միջեւ:

Առաջարկվող փոփոխության շնորհիվ հնարավորություն կստեղծվի համապատասխան ոլորտը կարգավորող օրենքներում նախատեսել կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցնելու այլ հիմքեր:

«Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի ու եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում: